ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ՛ ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆՅԱՆ,

Առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 99-րդ հոդվածի 1-ին մասով և 150-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Թագուհի Թովմասյանի՝ որպես Մարդու իրավունքների և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին» Ազգային ժողովի որոշման նախագիծը (այսուհետ նաև՝ Ազգային ժողովի որոշման նախագիծ):

Սույն գրությանը կցվում են՝

1. «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Թագուհի Թովմասյանի՝ որպես Մարդու իրավունքների և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին» որոշման նախագիծը Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելու մասին» Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության որոշումը,

2. Ազգային ժողովի որոշման նախագիծը,

3. Ազգային ժողովի որոշման նախագծի ընդունման հիմնավորումը:

Ազգային ժողովի որոշման նախագծի հիմնական զեկուցողն է Հովիկ Աղազարյանը:

Խնդրում եմ ներկայացված որոշման նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**
10.07.2023թ

095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԹԱԳՈՒՀԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ՝ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 99-րդ հոդվածի 1-ին մասով և 150-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն իր 10.07.2023թ.-ի նիստում

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հանդես գալ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Թագուհի Թովմասյանի՝ որպես Մարդու իրավունքների և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին» Ազգային ժողովի որոշման նախագիծը (այսուհետ նաև՝ Ազգային ժողովի որոշման նախագիծ) Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելու և սահմանված կարգով շրջանառության մեջ դնելու նախաձեռնությամբ:

2. Ազգային ժողովի որոշման նախագծի հիմնական զեկուցողն է Հովիկ Աղազարյանը:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

10.07.2023թ.

095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԹԱԳՈՒՀԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ՝ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Թագուհի Թովմասյանի լիազորությունները՝ որպես Մարդու իրավունքների և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

(Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Թագուհի Թովմասյանի՝ որպես Մարդու իրավունքների և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ)

Հայաստանի Հանրապետության ութերորդ գումարման Ազգային ժողովի պատգամավոր Թագուհի Թովմասյանն ընտրվել է Ազգային ժողովի Մարդու իրավունքների և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ՝ Ազգային ժողովի 12.08.2021 թվականի որոշմամբ:

Հարկ է արձանագրել, որ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի ընտրության, ինչպես նաև նրա լիազորությունների դադարեցման հարաբերությունները կարգավորող օրենսդրության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ թե՛ ընտրության, թե՛ լիազորությունների դադարեցման գործընթացները գտնվում են բացառապես Ազգային ժողովի խմբակցությունների քաղաքական որոշումների կայացման և Ազգային ժողովի կողմից սեփական գործունեության կազմակերպման տիրույթներում: Այսպես.

1. Մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում ընտրվելու համար նախատեսված չեն հատուկ պահանջներ կամ չափանիշներ, որոնց պետք է բավարարի պատգամավորը:

2. Մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունները դադարեցնելու համար նախատեսված չեն առանձին հիմքեր, ի տարբերություն օրինակ՝ Ազգային ժողովի պատգամավորի, Սահմանադրական դատարանի դատավորի, դատավորների դեպքում: Ավելին, լիազորությունների դադարեցման (հետ կանչելու) հիմքեր բացակայում են նաև Ազգային ժողովի կողմից իր կազմից ընտրվող Ազգային ժողովի նախագահի և Ազգային ժողովի նախագահի տեղակալների համար: Թե՛ մշտական հանձնաժողովի նախագահի, թե՛ Ազգային ժողովի նախագահի և նրա տեղակալների

լիազորություններն այդ պաշտոնում դադարեցնելու (հետ կանչելու) դեպքում օրենսդրությամբ պարզապես ամրագրվում է, որ դրա համար պետք է փակ–գաղտնի քվեարկությամբ ընդունվի Ազգային ժողովի որոշում, ինչպես նաև սահմանվում է որոշման ընդունման համար անհրաժեշտ ձայների քանակը:

3. Մշտական հանձնաժողովի նախագահի ընտրության գործընթացի՝ բացառապես Ազգային ժողովի խմբակցությունների քաղաքական որոշումների տիրույթում լինելը պարզ է դառնում նաև հաշվի առնելով, որ խմբակցությունները կարող են փոխհամաձայնությամբ փոխանակել կամ միմյանց զիջել մշտական հանձնաժողովի նախագահի թեկնածու առաջադրելու իրավունքը:

ՀՀ Սահմանադրական դատարանի 2021թ. ապրիլի 13-ի թիվ ՍԴՈ- 1587 որոշմամբ Սահմանադրական դատարանը, վերլուծելով Ազգային ժողովի կանոնակարգ սահմանադրական օրենքի՝ Ազգային ժողովի նախագահի, նրա տեղակալների, ինչպես նաև մշտական հանձնաժողովի նախագահների առաջադրմանն ու ընտրությանը և Ազգային ժողովի նախագահի, նրա տեղակալների, ինչպես նաև մշտական հանձնաժողովի նախագահների հետ կանչմանը և վերջիններիս լիազորությունների դադարեցմանը վերաբերող դրույթները, հանգել է այն եզրակացության, որ չնայած նրան, որ նշված պաշտոններում առաջադրման իրավունք ունեն կոնկրետ խմբակցությունները, նշված պաշտոններից հետ կանչման և լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունքով օրենսդիրն օժտել է հավասարապես բոլոր խմբակցություններին:

Վերը շարադրվածից պարզ է դառնում, որ մշտական հանձնաժողովի նախագահի, Ազգային ժողովի նախագահի, Ազգային ժողովի նախագահի տեղակալի պաշտոնների դեպքում թե՛ սահմանադրի, թե՛ օրենսդրի կողմից արտահայտվել է հստակ կամք՝ ձեռնպահ մնալ այդ պաշտոններում անձանց լիազորությունների դադարեցման (հետ կանչելու) առանձին հիմքեր սահմանելուց, այդ հարցերը թողնելով Ազգային ժողովի խմբակցությունների քաղաքական որոշումների և ընդհանուր առմամբ Ազգային ժողովի կողմից սեփական գործունեության կազմակերպման տիրույթներում:

Չնայած վերոգրյալի, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը, հավատարիմ մնալով Ազգային ժողովի գործունեության թափանցիկության ապահովման սկզբունքին, անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հանգամանքներին, որոնցից պարզ է դառնում, որ գործնականում առկա է պատգամավոր Թագուհի Թովմասյանի կողմից Ազգային ժողովի Մարդու իրավունքների և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում հետագա պաշտոնավարման անհնարինություն:

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ սահմանադրական օրենքի համաձայն, հանձնաժողովի նախագահի վրա դրվում են մի շարք պարտականություններ: Մասնավորապես, ԱԺ կանոնակարգ սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ մասի համաձայն՝ մշտական հանձնաժողովի նախագահը մասնակցում է Ազգային ժողովի Խորհրդի նիստերին:

   Թագուհի Թովմասյանը, սակայն, 8-րդ գումարման Ազգային ժողովի գործունեության ընթացքում կայացած **46** խորհրդի նիստերից մասնակցել է ընդամենը **8-ին**, այդպիսով չկատարելով հանձնաժողովի նախագահի իր պարտականությունները:

   Խորհրդի նիստերին չմասնակցելը հանգեցրել է այն բանին, որ հանձնաժողովը ԱԺ խորհրդի 46 նիստից **38-ին** չի ունեցել ներկայացուցիչ ի դեմս հանձնաժողովի նախագահի՝ այդպիսով զրկված լինելով Ազգային ժողովի լիագումար նիստերի օրակարգերի ձևավորմանը, ինչպես նաև Խորհրդի լիազորությունների շրջանակներում բազմաթիվ որոշումների կայացմանը մասնակցելուց: Սա վատթարացնող ազդեցություն է ունեցել հանձնաժողովի ընդհանուր գործունեության վրա:

   Ազգային ժողովի կանոնակարգ սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, հանձնաժողովի նախագահը համակարգում է Ազգային ժողովի մարմինների հետ հանձնաժողովի գործունեությունը: Համաձայն ԱԺ կանոնակարգ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի՝ Ազգային ժողովի Խորհուրդը Ազգային ժողովի մարմիններից մեկն է: Չմասնակցելով Ազգային ժողովի խորհրդի աշխատանքներին, Թագուհի Թովմասյանը չի կատարել նաև ԱԺ խորհրդի հետ հանձնաժողովի աշխատանքների համակարգման իր գործառույթը:

Այսպիսով, Թագուհի Թովմասյանը, չկատարելով օրենքով սահմանված իր պարտականությունները՝ հետևողականորեն չմասնակցելով ԱԺ խորհրդի նիստերին, խոչընդոտել է հանձնաժողովին լիարժեք և բնականոն գործունեությանը, խաթարել հանձնաժողովի աշխատանքի արդյունավետությունը՝ զրկելով հանձնաժողովին օրենքով իրեն վերապահված իրավունքների լիարժեք իրացումից:

2. Հարկ է նաև նշել, որ Թագուհի Թովմասյանը, լինելով Մարդու իրավունքների և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, որի գործունեության առանցքը **մարդու իրավունքների պաշտպանությունն է**, տարբեր իրավիճակներում, այդ թվում՝ իր իսկ նախագահությամբ ընթացող հանձնաժողովի նիստի ընթացքում, ՀՀ հարյուր հազարավոր քաղաքացիների արժանապատվության վիրավորման և ատելության խոսքի նկատմամբ ցուցաբերել է անտարբեր վերաբերմունք՝ իր անգործությամբ նպաստելով դրանց կրկնությանը: Տարբեր դրվագներում Թագուհի Թովմասյանը չի պաշտպանել ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մարդու՝ որպես բարձրագույն արժեք, անօտարելի արժանապատվությունը՝ այն ոտնահարող, նվաստացնող և վիրավորանք պարունակող հայտարարություններից: Ասվածը փաստող մի շարք տեսանյութեր առկա են հրապարակային բաց աղբյուրներում:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 138-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն մշտական հանձնաժողովների նախագահների թեկնածուների առաջադրման իրավունքը պահպանվում է մինչև Ազգային ժողովի լիազորությունների ավարտը: Հետևաբար, հաշվի առնելով վերոգրյալը, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը Ազգային ժողովի պատգամավոր Թագուհի Թովմասյանի որպես Մարդու իրավունքների և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման ընդունմամբ նպատակ ունի հետագայում ընտրելու հանձնաժողովի նախագահի, ով կկատարի իր պարտականությունները հավուր պատշաճի՝ միաժամանակ կմասնակցի խորհրդի նիստերին, որտեղ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն ի պաշտոնե ընդգրկված են մշտական հանձնաժողովների նախագահները: